

Թիւ 1070  
Մարտ 3, 1960

Արժանաշնորհ  
Տ. Բաբոյէն ԲՀՆԿ. Մազսուտեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Պոստոն.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1960 Փետրուար 23 թուակիր Միական Խորհուրդի  
տեղեկագիրը, որով կը տեղեկացնեն թէ Ձեր նախագահութեամբ զուգարուած  
Երկրային Ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները,  
եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրեն ընտրուած անձե-  
րուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրու-  
ուած են եւ իբրեւ եկեղեցւոյ զ պարտաւանաչ անդամներ կը վայելեն ըն-  
տրողներուն վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը  
հետեւեալ կարգով:

Տիրք՝ Արթուր Անսպիկեան  
Զարլս Թալանեան  
Զարլս Գէյթունեան  
Հայկ Ժամկոչեան  
Միհրան Ճսխալեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզի ու  
պատուարժան Միական Խորհուրդի Համերաշխ ու բեղմնաւոր գործունէու-  
թիւն ի պայմանութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր  
սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՍ  
Ռոաշնորդ Հայոց Ամերիկայի